ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 19-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված, ինչպես նաև նոր ձևավորված հենասյունային ուղղությունների՝ քրեական ու համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունների և ենթակա տարածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ ներքին գործերի նախարարի 14.03.2023թ. N 4-Լ հրամանի 19-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական և համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունների և ենթակա տարածքային ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման, հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, դեպքի վայր մեկնելու, դեպքի

վայրում համագործակցության, ինչպես նաև օպերատիվ-հաշվառման գործերի կազմման և վարման ենթակայության վերաբերյալ» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալին և համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալին՝ կազմակերպել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի՝ 01.07.2020թ. N 1-ԼՀԳ հրամանով սահմանված օպերատիվ հաշվառման գործերի հանձնման-ընդունման աշխատանքները՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության հետ:

3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասու աշխատողներին և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավասու ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«01» նոյեմբերի 2024թ.
քաղ. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության ոստիկանության
պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի
« 01 » նոյեմբերի 2024թ.
N 19 - Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ, ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԴԵՊՔԻ ՎԱՅՐ ՄԵԿՆԵԼՈՒ, ԴԵՊՔԻ ՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հանցագործությունների վերաբերյալ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն (այսուհետ՝ ՔՈԳՎ) և ենթակա տարածքային ստորաբաժանումներ ստացված հաղորդումների վերաբերյալ տեղեկատվությունը (ֆիզիկական անձի անմիջական հաղորդում, ֆիզիկական կամ իրավաբանական անձի փոստային հաղորդում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հաղորդում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի հաղորդում, օպերատիվ տվյալների, հատկապես կազմակերպված հանցավորության՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, համակարգչային ոլորտում կատարվող հանցագործությունների վերաբերյալ) տրամադրվում է ՀՀ ներքին գործերի նախարարության համայնքային ոստիկանության գլխավոր վարչությանը (այսուհետ՝ ՀՈԳՎ) և տվյալ տարածքը սպասարկող (այսուհետ՝ իրավասու) բաժնին, ինչպես նաև Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնին (այսուհետ՝ ՕԿԿ):

2. Ակնհայտ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ ՔՈԳՎ և ենթակա տարածքային ստորաբաժանումներ ստացված հաղորդումների վերաբերյալ տեղեկատվությունն անհապաղ փոխանցվում է ՀՈԳՎ՝ իրավասու բաժնին:

3. Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող հաղորդում կամ տեղեկություն ստանալու դեպքում՝ դեպքի վայր են մեկնում ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանման օպերատիվ խմբի ծառայողները:

4. Հանցագործությունների վերաբերյալ՝ ՀՈԳՎ և ենթակա իրավասու բաժիններ ստացված հաղորդումների վերաբերյալ տեղեկատվությունը (ֆիզիկական կամ իրավաբանական անձի փոստային հաղորդում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հաղորդում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի հաղորդում, օպերատիվ տվյալների, հատկապես կազմակերպված հանցավորության՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, համակարգչային ոլորտում կատարվող հանցագործությունների վերաբերյալ) տրամադրվում է ՔՈԳՎ՝ իրավասու տարածքային ստորաբաժանմանը և ՕԿԿ-ին:

5. Ակնհայտ ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև հնչեղություն ստացած հանցագործության դեպքի վերաբերյալ ՀՈԳՎ և ենթակա իրավասու տարածքային բաժին հաղորդում ստանալիս, այն անհապաղ փոխանցվում է ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանմանը:

6. Հանցագործության մասին հաղորդում ստանալու պարագայում՝ պարեկային ծառայության ծառայողների կողմից դեպքի վայր մեկնելուց հետո, ակնհայտ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության հատկանիշներ հայտնաբերվելու դեպքում՝ ՕԿԿ-ի կողմից դեպքի վայր են ուղարկվում նաև ՀՈԳՎ իրավասու բաժնի օպերատիվ խմբի ծառայողները:

7. Ակնհայտ ծանր հանցագործության դեպքում, բացի ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանման օպերատիվ խմբից, դեպքի վայր է մեկնում ՀՈԳՎ իրավասու բաժնի՝ տվյալ տեղամասը սպասարկող ծառայողը, իսկ առանձնապես ծանր հանցագործության դեպքում՝ նաև ՀՈԳՎ իրավասու բաժնի պետը, վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու տեղակալը:

8. Պատահարների և հանկարծամահությունների վերաբերյալ հաղորդումներ ստանալիս՝ դեպքի վայր է մեկնում ՀՈԳՎ իրավասու բաժնի օպերատիվ խումբը:

9. Հանկարծամահությունների փաստով համապատասխան օպերատիվ հաշվառման գործը կազմվում է ՀՈԳՎ իրավասու բաժնում, սակայն դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը ստացվելուց հետո, երբ կշարունակվի վարույթի քննությունը, որպես սպանություն, համապատասխան օպերատիվ հաշվառման գործն անհապաղ փոխանցվում է ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանմանը:

10. Հանցագործության ծանրության աստիճանն, ըստ նախնական տեղեկատվության, որակելու անհնարինության դեպքում՝ դեպքի վայր է մեկնում ՀՈԳՎ իրավասու բաժնի օպերատիվ խումբը և տեղում իրականացնում օրենսդրությամբ նախատեսված առաջնահերթ

օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումներ, մինչև քննիչի կողմից վարույթ նախաձեռնելը և հանցագործությունը որակելը:

11. Համակարգչային բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումները, անկախ ծանրության աստիճանից, փոխանցվում են ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանում:

12. Հանցագործության դեպքի վայրում գտնվող ոստիկանության ծառայողների գործողությունների ղեկավարումը ստանձնում է պաշտոնով կամ կոչումով ավագ ծառայողը:

13. ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանման ծառայողի՝ դեպքի վայր ժամանելու և դեպքը նրանց վերաբերելի լինելու փաստը հաստատվելու պարագայում, ոստիկանության մյուս ծառայողներն, իրենց լիազորությունների շրջանակում, առաջնահերթ ծառայողական և օպերատիվ-հետախուզական աշխատանքներում համապատասխան աջակցություն են ցուցաբերում դեպքի վայր ժամանած ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանման ծառայողներին:

14. Դեպքի վայրում ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանման ծառայողներին աջակցություն ցուցաբերվում է ՀՈԳՎ իրավասու բաժնի՝ տվյալ տարածքը սպասարկող ծառայողի կամ ծառայողների կողմից:

15. ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանման պետի կամ տեղակալի պատճառաբանված գրավոր պահանջի դեպքում, անկախ տեղի ունեցած հանցագործության ծանրության աստիճանից, տվյալ օպերատիվ-հաշվառման գործը փոխանցվում է նշված ծառայությանը:

16. Քրեական վարույթ իրականացնող մարմիններից ստացված՝ վարույթն իրականացնող մարմիններ հարկադրաբար ներկայացնելու որոշումների և այլ հանձնարարականների կատարումն ապահովվում է ըստ հանցագործության ծանրության աստիճանի՝ համապատասխանաբար ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով ՔՈԳՎ, ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով՝ ՀՈԳՎ իրավասու ստորաբաժանումների կողմից:

17. Դեպքի վայրում լրացուցիչ ոստիկանական ուժերի անհրաժեշտության դեպքում, ըստ իրավասու ստորաբաժանման պետի պահանջի, Ոստիկանության պետի կամ իրավասու տեղակալի ցուցումով՝ ապահովվում է լրացուցիչ ուժերի տրամադրումը դեպքի վայրում գտնվող ծառայողներին:

18. Յուրաքանչյուր քրեական վարույթով, ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտով սահմանված կարգի պահանջներին համապատասխան՝ կազմվում է համապատասխան օպերատիվ հաշվառման գործ՝ համապատասխանաբար ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության դեպքով՝ ՀՈԳՎ, իսկ ծանր ու առանձնապես ծանր հանցագործության դեպքով՝ ՔՈԳՎ իրավասու ստորաբաժանման կողմից:

19. Օպերատիվ հաշվառման մյուս գործերը կազմվում են նույն տրամաբանությամբ՝ ըստ առերևույթ հանցագործության ծանրության աստիճանի, բացառությամբ համակարգչային բնույթի հանցագործության դեպքերի, որոնցով, անկախ ծանրության աստիճանից, օպերատիվ հաշվառման գործերը կազմվում են ՔՈԳՎ իրավասու տարածքային ստորաբաժանման կողմից:

20. ՀՈԳՎ և ենթակա բաժինների տեղեկատվական շտեմարանները հասանելի են լինելու ՔՈԳՎ և ենթակա տարածքային ստորաբաժանումներին (ՀՈԳՎ և ենթակա բաժինների թվային շտեմարաններ, տարածքի անձնագիր, ընտանական բռնության և անչափահասների գործերով հաշվառման քարտեր, ամսական կտրվածքով քրեաբանական վերլուծություններ և հաշվետվություններ, քրեածին իրավիճակով պայմանավորված այլ վերլուծություններ), իսկ ՔՈԳՎ և ենթակա տարածքային ստորաբաժանումներում առկա շտեմարանները՝ ՀՈԳՎ և ենթակա բաժիններին:

ՀՀ ներքին գործերի նախարարություն